ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

20. 12.2018թ.

ք. Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 95 անդամներից 92 -ը, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության հիմնարկ - ձեռնարկությունների ղեկավարներ, մարզպետարանի աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Մարզի համայնքների բյուջեների 11 ամիսների կատարողականի մասին:

/Զեկ.՝ ֆինանսատնտ.վարչ.պետ Գ.Եղիազարյան /

2. Քաղաքաշինության բնագավառում մարզի համայնքների ղեկավարների գործունեության և 2018թ.-ի 9 ամիսների ընթացքում մարզում ՀՀ պետական ֆինանսավորմամբ իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքի մասին:

/Զեկ.՝ Քաղաքաշինության վարչության

պետի պաշտոնակատար Լ.Գրիգորյան /

3. 2018 թվականի 4-րդ եռամսյակում մարզի համայնքներում մարզպետի կողմից իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների մասին:

/ ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության գլխ. մասնագետ Հ. Դանիելյան /

4. Այլ հարցեր:

1.Լսեցին՝

Մարզի համայնքների 2018թ. 11 ամիսների բյուջեների կատարման մասին ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեցին՝ մարզպետ Գ. Սարգսյանը, համայնքների ղեկավարներ :

Առաջարկվեց

համայնքների ղեկավարներին '

- հետևողական լինել մինչև տարեվերջ ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու գործընթացում ,
- սեփական եկամուտների հավաքագրումը սահուն կերպով կազմակերպելու նպատակով իրականացնել հանրային լսումներ:

2. Լսեցին

Քաղաքաշինության բնագավառում մարզի համայնքների ղեկավարների գործունեության և 2018թ.-ի 9 ամիսների ընթացքում մարզում ՀՀ պետական ֆինանսավորմամբ իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքի մասին քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Լ. Գրիգորյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեցին՝ մարզպետ Գ. Սարգսյանը, համայնքների ղեկավարներ :

Հանձնարարվեց

քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Լ. Գրիգորյանին՝

- մարզում շինարարական աշխատանքների իրականացման համար հայտարարված մրցույթներն անցկացնել օբյեկտիվ և արդար:

3. Լսեցին

2018 թվականի 4-րդ եռամսյակում մարզի համայնքներում մարզպետի կողմից իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների մասին: ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության գլխավոր մասնագետ Հ. Դանիելյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեց՝ մարզպետ Գ. Սարգսյանը :

Առաջարկվեց

համայնքների ղեկավարներին ՝

- հնարավորինս սեղմ ժամկետներում շտկել իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում արձանագրված թերություններն ու բացթողումները:

Նիստի վերջում 2018թ. սկզբին մարզի տարբեր համայնքներում արձանագրված կարկտահարության և ցրտահարության հետևանքով առավելապես վնաս կրած համայնքներին ՀՀ կառավարության կողմից հատկացված դրամական փոխհատուցման վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հ. Տերտերյանը և նշեց, որ համայնքների հողօգտագործողները փոխհատուցումը կարող են ստանալ իրենց փոստային բաժանմունքներից:

Մարզխորհրդի նիստն ամփոփեց մարզպետ Գ. Սարգսյանը՝ նիստի մասնակիցներին շնորհավորելով գալիք Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ ու համայնքների ղեկավարներին առաջարկեց տոնական օրերին խիստ ուշադրություն դարձնել համայնքների և համայնքային ճանապարհների մաքրությանը:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 27.12.2018 15:58:23 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN GARIK 2811870695 Գ. ՍԱՐԳՍՅԱՆ